Հաստատված է
ՀՀ կառավարության 2001 թվականի
ապրիլի 12- ի N 286 որոշմամբ

ՀՈՂԱՄԱՍԻ ԱՌՔՈՒՎԱՃԱՌՔԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

_____ «____» _____ թ.
վայրը

_____
գույքն օտարող անձի անվանումը

այսուհետև ՝ «Վաճառող», մի կողմից, և _____
անձի անվանումը կամ անունը, ազգանունը

_____ այսուհետև՝ «Գնորդ», մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով Վաճառողը պարտավորում է Գնորդին որպես սեփականություն հանձնել _____ հա հողամաս (այսուհետև՝ Գույք), իսկ Գնորդը պարտավորում է ընդունել այդ Գույքը և դրա համար վճարել _____ ՀՀ դրամ:

1.2. Գույքի համար վճարված գինը որոշված է հողամասն աճուրդով վաճառելու արդյունքների մասին N ___ արձանագրությամբ, որը կցվում է սույն պայմանագրին և հանդիսանում է նրա անբաժանելի մասը: Սույն պայմանագրի կնքման պահին Գույքի գինը Գնորդի կողմից վճարված է:

1.3. Գույքի հատակագիծը կցվում է սույն պայմանագրին և հանդիսանում է նրա անբաժանելի մասը:

1.4. Վաճառողը երաշխավորում է, որ սույն պայմանագիրը կնքելու պահին Գույքը վաճառված, նվիրված կամ գրավ դրված չէ և արգելանքի տակ չի գտնվում:

2. Կողմերի իրավունքները և պարտականությունները

2.1. Վաճառողը պարտավոր է՝

2.1.1. սույն պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցման պահից երկօրյա ժամկետում Գնորդին՝ հանձնման-ընդունման ակտով հանձնել Գույքը, ինչպես նաև ՝ Գույքի նկատմամբ Գնորդի՝ գրանցված իրավունքները հավաստող փաստաթղթերը.

2.1.2. Գնորդին հանձնել Գույքի օգտագործման նպատակի, չափերի, կարգի, ճանապարհների, ջրատարի, կոյուղու, էլեկտրահաղորդման գծերի, գազատարի (գյուղատնտեսական հողերի դեպքում՝ նաև որակական հատկանիշների), ինչպես նաև սահմանափակումների (ներառյալ սերվիտուտները) առկայության մասին կայացած _____ աճուրդից մեկ ամիս առաջ
նշել աճուրդի անցկացման տեղը, օրը, ժամը
զանգվածային լրատվության միջոցներով հրապարակված տվյալներին համապատասխան Գույք:

2.2. Եթե Վաճառողը Գնորդին հանձնել է սույն պայմանագրի 5.2-րդ կետում նշված պահանջներին չհամապատասխանող Գույք, ապա Գնորդն իրավունք ունի պահանջել փոխարինելու այդ Գույքը կամ հրաժարվելու հանձնված Գույքից և պահանջել վերադարձնելու Գույքի համար վճարված գինը:

3. Սեփականության իրավունքի փոխանցումը

3.1. Սույն պայմանագիրը ենթակա է պարտադիր նոտարական վավերացման:

3.2. Գույքի նկատմամբ Գնորդի սեփականության իրավունքը ծագում է սույն պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցման պահից:

4. Կողմերի պատասխանատվությունը

Կողմերը սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կերպով կատարելու համար կրում են գույքային պատասխանատվություն՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

5. Պայմանագրի գործողությունը

Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կնքվելու, նոտարական կարգով վավերացվելու և Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական մարմնում պայմանագրից ծագող իրավունքների գրանցման պահից և գործում է մինչև կողմերի՝ սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների պատշաճ կատարումը:

6. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը

Սույն պայմանագրով սահմանված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու դեպքում կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնար են դարձնում սույն պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծարելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. Եզրափակիչ դրույթներ

7.1. Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտականությունները չկատարելու համար պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կար-

գով:

7.2. Սույն պայմանագրում բոլոր փոփոխությունները և լրացումները կատարվում են կամ պայմանագիրը լուծարվում է կողմերի գրավոր համաձայնությամբ կամ լուծվում դատարանի վճռով:

7.3. Սույն պայմանագիրը կնքված է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկական օրինակ:

8. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները՝

Վաճառող	*Գնորդ*
_____	_____
_____	_____
_____	_____
_____	_____
_____	_____
_____	_____
ստորագրություն	ստորագրություն